ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1957 Общественные науки

Ա. Փիրուզյան

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ

Մելիք Մելիքյանն այն առաջին հայ բանվորներից է, որը բարձրացավ մինչև պրոֆեսիոնալ ռևոլյուցիոների աստիճանը։ Նրա կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված են Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հետ։ Մելիքյանը վաղ հասակից, մասնակցելով ռևոլյուցիոն շարժումներին, դառնում է կովկասյան սոցիալ-դեմոկրատական շարժման ակտիվ գործիչներից մեկը։

Մելիք Գալուստի Մելիքյանը (պարտիական շրջաններում հայտնի է «Դեղուշկա» անունով) ծնվել է 1868 թ. Ելիզավետպոլի նահանգի Բանանց գյուղում։

Անհրապույր մանկություն ու դառը պատանեկություն է ունեցել Մելիքյանը։ Մի կտոր հաց վաստակելու համար նա ստիպված է լինում թողնել հայրենի գյուղը, մեկնել նախ Բաքու և ապա՝ Թիֆլիս։ Թիֆլիսում 1895 թ. նա մոտիկից ծանոթանում է Կովկաս աքսորված ռևոլյուցիոներ Ս. Ալիլուևի, Ֆ. Աֆանասևի, Վ. Կուռնատովսկու, Ի. Ֆրանչեսկու, Ի. Լուզինի և ուրիշների հետ։ Առաջադեմ ու ուշիմ երիտասարդը դալիս է այն համոզմանը, որ ինչպես ասում է ինքը «Աշխարհիս քարը ծուռն է դրված, պիտի դրստել»։

1898 թ. Մելիքյանը մտնում է ՌՍԴԲՊ շարքերը։ Նույն թվականին Թիֆլիսում կազմակերպվում է առաջին հայ մարքսիստական բանվորական ընդհատակյա խմբակը, որի ամենաակտիվ մասնակիցն էր Մելիքյանը։ 1900 թ. Պողոս (Հայկ) Փիլոսյանի հետ Մելիքը Թիֆլիսում հիմնադրում է առաջին հայ անլեգալ ձեռագիր «Բանվոր» թերթը։ Շուտով նա ընտրվում է Թիֆլիսի ՌՍԴԲՊ-ի կոմիտեի անդամ։

1901 թ. ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեն Մելիքյանին առաջարկում է մեկնել Բաքու, մասնակցելու ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեի ստեղծմանը։ Մելիքյանը Բաքվում կապվում է նավթաշխարհի բանվորների հետ, ծավալում ագիտացիոն-պրոպագանդիստական ու կազմակերպչական լայն աշխատանք։

Մելիքյանը Լ. Կեցխովելու, Լ. Կրասինի, Ն. Կողերենկոյի, Բ. Կնունյանցի, Լ. Գալպերինի և ուրիշների հետ միասին բոլշևիկյան հայտնի ընդհատակյա «Նինա» տպարանի ստեղծողներից մեկն է։

1902 թ. երբ ձերբակալվել էր Բաքվի ՌՍԴԲՊ-ի անդամների մեծ մասը, նա չբանտարկված տակավին սոցիալ-դեմոկրատների հետ միասին ղեկավարում է մայիսմեկյան ցույցը՝ Բաքվի պրոլետարիատի առաջին ամենաուժգին մարտական ելույթը՝ կապիտալիստական կարգերի դեմ։

Նույն թվականին ՌՍԴԲՊ-ի Բաքվի կոմիտեն Մելիք Մելիքյանին գործուղում է Գանձակ (Կիրովաբադ) մասնակցելու սոցիալ-դեմոկրատական խմբակ ստեղծելու աշխատանքներին։ Քաղաքական պայքարի մեծ փորձ ունեցող Մելիքյանը պայքար է ծավալում դաշնակցականների ու հնչակյանների դեմ, դրժ-

վարկն պայմաններում ստեղծվում է Գանձակի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։

Վերադառնալով Բաքու, ՌՍԴԲԿ-ի կոմիտեի հանձնարարությամբ Մելիքյանը բանվորների համար կազմակերպում է զրույցներ, դասախոսություններ, տարածում անլեգալ գրականություն, պրոկլամացիաներ և այլն, շարունակելով մշտական կապ պահպանել Գանձակի սոցիալ-դեմոկրատական խմբակի հետ։

Գանձակի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության սան, պարտիայի ականավոր գործիչ Ա. Մռավյանը Մելիքյանի մասին գրում է. «Նավթաշխարհի սև ու մռայլ մթնոլորտում Մելիքը իսկապես մի լուսատու և հուսատու շող էր, որն ընկնում էր բանվորական նկուղները և լուսավորում։ Հազարավոր բանվորների ու երիտասարդ ինտելիգենտների, գյուղացիների ուսուցիչն էր Մելիքը։ Տողերիս գրողը բոլշևիզմի առաջին դասերն ստացել է Մելիքից։ Բիբի-Հեյբաթում չկար մի նավթահանք, ուր ոտքը կոխած չլիներ Մելիքը, նրան ճանաչում էին ամեն տեղ»[1]։

Մելիքյանի ռևոլյուցիոն գործունեության հետ է առնչվում նաև Լոռվա բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծումը։ 1903 թ. Մ. Մելիքյանի և Ա. Կախոյանի ջանքերով ստեղծվում են Հաղպատ գյուղի՝ Ալավերդու և Սանահինի կայարանի բոլշևիկյան խմբակները, որոնք հետագայում մեծ դեր են կատարում Լոռու պարտիական կազմակերպությունների ընդարձակման ուղղությամբ։

Նույն թվականի ամռանը ՌՍԴԲԿ անդամների հետ մեկտեղ նա ձեռնամուխ է լինում Բաքվի բանվորների հուլիսյան ցույցերի կազմակերպմանը։ Բանվորական ժողովներում ու հավաքույթներում նա իր հռետորական ձիրքով ուղղակի գերում էր ունկնդիրներին։ Նրա խոսքը բանվորների մեջ հնչում էր որպես համոզմունք, որպես անխուսափելի ճշմարտություն, որպես գալիք ռևոլյուցիոն ելույթների հաղթական կոչ։

Շուտով Բաքվի նահանգական ժանդարմական վարչությունն ու ցարական պահնորդական օրգանները Մելիքյանին հսկողության տակ են առնում։ Ոստիկանական զեկուցագրերում ընդգծվում է, որ 1903 թ. Մելիքյանը ռևոլյուցիոն ակտիվ աշխատանք է կատարում Բաքվի Բալախանիի և Սաբունչիի շրջաններում ու որպես ՌՍԴԲԿ-ի Բաքվի կոմիտեի ներկայացուցիչ ղեկավարում է պարտիական աշխատանքները[2]։

1904 թ. գարնանը Մելիքյանը ցարական ժանդարմերիայի կողմից ձերբակալվում է որպես քաղաքական հանցագործ, մեկուսացվում Բաքվի Բայիլովի բանտում։

Նույն թվականի աշնանը նա մեկ տարով աքսորվում է Բոինանց գյուղը։ Սակայն այստեղ ևս Մելիքյանը հնարավորություն է ստեղծում անլեգալ կապեր հաստատելու բանվորական կենտրոնների՝ Բաքվի, Թիֆլիսի և Գանձակի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, մասնակցելու պարտիական ամենակարևոր ձեռնարկումներին։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի օրերին Մելիքյանին մենք տեսնում ենք Բաքվի և Թիֆլիսի բանվորական շարժման ավանգարդում։ Իրեն հատուկ եռանդով Մելիքյանը Բաքվի բանվորական հավաքույթներում հանդես է գալիս ռևո-

[1] «Խորհրդային Հայաստան», 1923, № 217։
[2] Վրացական ՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 3, գ. 563։

լյուցիոն կրակոտ կոչերով։ Ոստիկանությունն անմիջապես ձեռնամուխ է լինում «վտանգավոր» ռևոլյուցիոներին ձերբակալելու գործին։ Շուրջկալը սակայն, այս անգամ չի հայտնաբերում Մելիքյանին, որը խուսափելով հետապնդումից, վերադառնում է Թիֆլիս։ Այստեղ ևս նա ղեկավար մասնակցություն է ցույց տալիս բանվորական մասսայական ցույցերի և գործադուլների կազմակերպման գործին։ Օգոստոսի 29-ին հանդես գալով քաղաքային դումայի առջև կայացած միտինգում, նա մերկացնում է ցարիզմի ազգահալած քաղաքականությունը, կոչ անում ինքնակալության դեմ պայքարելու համար չոր պահել վառոդը։

Տեղական իշխանությունները միտինգը ցրում են զենքով։ Ի թիվս շատերի, կաղակային սվինից ծանր վերք է ստանում նաև Մելիքյանը։

Բուժվելուց հետո ՌՍԴԲՊ Կովկասյան Միության հանձնարարությամբ Մելիքյանը՝ Ասատուր Կախոյանի հետ միասին ղեկավարում է Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլը։ Ստեղծվում է գործադուլային կոմիտեն, որը մշակում է գործարանատիրոջը ներկայացվելիք 22 կետից բաղկացած բանվորների պահանջները։ Ալավերդու բանվորները ֆրանսիական տերերին ստիպում են հիմնականում կատարել իրենց պահանջները։ Սակայն, հետագայում, գործարանատերերը հենվելով ցարական իշխանության վրա, բանվորների նկատմամբ կիրառում են ամենավայրագ ռեպրեսիաներ, թելադրում աշխատանքային ստորացուցիչ պայմաններ։ 1906 թ. օգոստոսին Ալավերդում պայթում է բանվորական հուժկու մի նոր ելույթ։ Ծայր է առնում իր ծավալով և ընդգրկման խորությամբ առավել նշանակալից մի նոր գործադուլ, որին մասնակցում են 4500 բանվորներ։ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի հետ միասին այս գործադուլի կազմակերպիչն էր նաև Մ. Մելիքյանը։ Մեկ ամիս հետո է միայն, որ Թիֆլիսի նահանգապետին հաջողվում է ճնշել գործադուլը։ Սակայն դրանից հետո ևս Մելիք Մելիքյանը չի դադարեցնում իր աշխատանքը։

Ռևոլյուցիայի վետերաններ՝ Ստ. Շահումյանի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի և մյուս ականավոր բոլշևիկների հետ միասին նա համառ կերպով շարունակում էր իր ռևոլյուցիոն աշխատանքը Անդրկովկասում։

Լինելով հայ առաջին բանթղթակիցներից, հանդես է գալիս պարբերական մամուլում՝ «Բոլշևիկյան կայծ», «Նոր խոսք», «Օրեր» թերթերում, մերկացնում ցարիզմի, բուրժուազիայի, ազգայնական պարտիաների քաղաքականությունը, առաջ քաշում հասարակական կյանքի կարևորագույն հարցեր, պրոպագանդում բոլշևիկյան պարտիայի առաջադրանքներն ու խնդիրները։ Առանձնակի եռանդով Մելիքյանը պայքարում է դաշնակցության դեմ, նշավակում նրանց բարբարոսական արարքները. «Նա անհաշտ, ոխերիմ թշնամի էր դաշնակցականներին, ուղղակի որսի էր դուրս գալիս նրանց դեմ և միշտ ծաղր ու ծանակի ենթարկում նրանց շովինիզմը»[1]։ Իր մի շարք հոդվածներում Մելիքյանը հանգամանորեն վերլուծում է գործադուլների ծագման պատճառները, ցույց տալիս նրանց անհրաժեշտությունը՝ մասսաների ռևոլյուցիոն գիտակցության կոփման, ռևոլյուցիայի նախապատրաստման գործում։

Մելիքյանը ներկայացնում է աշխատավորների դառն վիճակը, ցույց տալիս, որ սովահար եղած մարդիկ գյուղից-քաղաք, քաղաքից-գյուղ են թափա-

---

[1] «Մարտակոչ», 1926, № 20։

ռում մի կտոր հաց վաստակելու համար, իսկ նրանց հաշվին ճարպակալում և ուռճանում է բյուրոկրատների, գործարանատերերի ոհմակը։

Իր ռևոլյուցիոն գործունեությունը Մելիքյանը չի ընդհատում նաև Ստոլիպինյան դաժան ռեակցիայի տարիներին։ 1907 թ. Բաքվի ՌՍԴԲՊ-ի կոմիտեի հանձնարարությամբ Ս. Սպանդարյանի գլխավորությամբ նա ձեռնամուխ է լինում «Օրեր» թերթի հրատարակությանը։

Թերթում Մելիքյանը քննադատում է ցարական բյուրոկրատիան, որը օգտվելով ստեղծված դրությունից, ամեն տիպի կամայականություններով ոտնահարում է բանվորների իրավունքները։ Բազմազան են Մելիքյանի այդ հոդվածներում բարձրացրած հարցերը։ Մի դեպքում նա բողոքում է ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի որոշման դեմ, հայկական դպրոցները փակելու և եկեղեցական կալվածքները զրավելու վերաբերյալ, ցույց տալիս ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը, այլ առիթներով նա վճռականապես պայքարում է «սոցիալիզմի» քողով հանդես եկող «սպեցիֆիկների» դեմ, նշելով, որ նրանք դաշնակցականների և հնչակյանների խառնուրդ են, և չեն կարող որևէ կապ ունենալ հայ պրոլետարիատի հետ։

Իր մի շարք հոդվածներում նա մանրամասնորեն լուսաբանում է պրոֆեսիոնալ միությունների խնդիրները ընդգծելով նրանց դերը բանվորներին բոլշևիկյան պարտիայի շուրջը համախմբելու և կազմակերպելու գործում։ «Պրոֆեսիոնալ միությունները,— գրում է նա,— պետք է հանդիսանան բանվորության բովանդակ շահերի արտահայտիչը և հարազատ ծնունդը»։ Հանդիսանալով նավթագործ բանվորների պրոֆմիությունների կազմակերպիչներից մեկը՝ նա մերկացնում է դաշնակցության գործունեությունը այդ ուղղությամբ, ընդգծում է, որ նացիոնալիստական «գաղափարները» ներծծված են թույնով։ Հեղաշրջումից հետո ավելի դժվարին են դառնում Բաքվի բոլշևիկների մարտական շտաբի խնդիրները։ Մի կողմից մենշևիկները, մյուս կողմից էսեռները ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաները դիմում են ամեն տեսակի միջոցների, որպեսզի բանվորներին հետ պահեն ռևոլյուցիոն պայքարի ճանապարհից։

Մելիքյանն այդ օրերին ժանդարմերիայի խիստ հսկողության տակ էր, 1909 թ. մայիսի 5-ին Բաքվի քաղաքագլուխը Կովկասի փոխարքային զեկուցում է նրա ռևոլյուցիոն, հակակառավարական գործունեության մասին։ Բաքվի ժանդարմերիայի կազմած արձանագրություններից մեկում ասված է. «...Մելիքյանը 1903 թ. հանդիսանում է ներկայացուցիչ Բալախանի-Սաբունչիի շրջանի համար և եղել է միջնորդ այդ շրջանի տեղամասերի ներկայացուցիչների և ՌՍԴԲՊ-ի Բաքվի կոմիտեի մեջ։ Բանվորական բոլոր ժողովներում Մելիքյանը հանդիսացել է հռետոր և մարքսիստական կազմակերպության դեկավար դործադուլի ժամանակ ակտիվ մասնակցություն ունենալու համար։ Հենց նա էլ ստացել է կոմիտեից և տարածել հանցագործ հրատարակչություններ»[1]։ Հետապնդումներից խուսափելու համար Մելիքյանը որոշում է որոշ ժամանակ հեռանալ Կովկասից, և նա գնում է Կիև սովորելու։

Մելիքյանն ընդունվում է Կիևի պետական համալսարանը։ Սակայն երկու ամիս սովորելուց հետո նյութական ծանր պայմանները նրան ստիպում են վե-

[1] Ադրբեջանական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 10/3-ը., գ. 32։

բաղառնալ Բաքու, որտեղ և ընդհատակում շարունակում է իր ռևոլյուցիոն պրոպագանդիստական աշխատանքը բանվորների միջավայրում։

1911 թ. Մ. Մելիքյանը Ստ. Շահումյանի խմբագրությամբ հրատարակվող «Նոր խոսք» մարքսիստական ամսագրի ամենամոտ ու գործարար աշխատակիցներից մեկն էր։ Նա մասնակցում էր խմբագրական կոլեգիայի նիստերին, առաջարկներ մտցնում թերթի աշխատանքները ավելի հաջողությամբ կազմակերպելու ուղղությամբ։

Հանդես գալով ամսագրում, Մելիքյանը պարզ և հստակ լեզվով մերկացնում է կապալառուներին, բանվորների այդ անկոչ խնամակալներին ու «դաստիարակներին», որոնց միակ նպատակը բանվորներին կեղեքելու գնով հարստություն կուտակելն էր[1]։

Մելիքյանը պաշտպանության տակ է վերցնում Ստ. Շահումյանի «Տիեզերական թութակը» հոդվածը, խիստ քննադատության է ենթարկում դաշնակցության «թեորետիկներ» Հ. Հովհաննիսյանին և Մ. Վարդանյանին, նրանց ճամարտակություններն անվանելով «ցնդաբանություն» և «առասպել»։ Այդ առթիվ նա զայրույթով գրում է. «Սրանք չեն ցանկանում կարդալ և հասկանալ, ոչ Մարքսին և ոչ Էնգելսին, ոչ էլ նրա հետևորդներին»։

1911 թ. սեպտեմբերի 30-ի գիշերը նա ձերբակալվում է և նետվում Բայիլովի բանտը։ 1912 թ. ապրիլին Ստ. Շահումյանի, Ավել Ենուկիձեի և Միքայել Սադովսկու հետ միասին Մելիք Մելիքյանը աքսորվում է Ռուսաստանի հեռավոր նահանգներից մեկը[2]։ 8 ամիս աքսորում մնալուց հետո նա նորից վերադառնում է Բաքու։ ՌՍԴԲՊ Բաքվի կոմիտեն այս անգամ նրան հանձնարարում է «Պրավդա» թերթը, անլեգալ գրականությունը մասսաներին հանձնելու գործը։ Այդ նպատակով ստեղծվում է մի կրպակ, որը միևնույն ժամանակ բոլշևիկների հավաքատեղն էր։ «Պրավդա» թերթից 400 օրինակ անլեգալ ճանապարհով բանվորների մեջ էր տարածվում Մելիքյանի միջոցով։

Ռևոլյուցիոն գործունեությունից բացի, Մելիքյանը զբաղվել է նաև գրական աշխատանքով։ 1914 թ. Թիֆլիսում բանաստեղծ Հ. Հակոբյանի նախաձեռնությամբ լույս է տեսնում «Կարմիր մեխակներ» գրական-գեղարվեստական ալմանախը։ Մելիքյանն այստեղ զետեղել էր երկու պատմվածք, որոնցից, ինչպես նշում է Հ. Հակոբյանը, բուրում էր պրոլետարական կյանքի համն ու հոտը։ «Նոքա,— շարունակում է Հակոբյանը,— առաջինն էին մեր գրականության մեջ իրենց զուտ պրոլետարական դասակարգային մոտեցումով արձակի բնագավառում»։

Մելիքյանն իր պատմվածքներում նկարագրում է, թե ինչպես հայ գյուղացին, քայքայվելով կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումից («Աչքը բացվեց»), թողնում է գյուղը և գնում քաղաք իր գոյությունը պահպանելու։ Գալով քաղաք՝ նրա «աչքը բացվում է» շնորհիվ մարքսիզմի ուսմունքի, որը Մելիքյանը պատկերավոր ձևով համեմատում է էլեկտրական լամպի լույսի հետ։

1914 թ. սկզբից ՌՍԴԲՊ կոմիտեն հսկայական աշխատանք է կատարում բանվորական ընդհանուր գործադուլի նախապատրաստման ուղղությամբ։

---

[1] «Նոր խոսք», 1911, № 1—2։

[2] Վրացական ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 2 C., գ. 2323։

Մելիք Մելիքյանը կազմակերպչական պրոպագանդիստական լայն աշխատանք է ծավալում Բալախանի, Սուրախանի և Բիբի-Հեյբաթի բանվորների մեջ, որոնք մայիս, հունիս ամիսների գործադուլներին հանդես եկան Բաքվի պրոլետարիատի ավանգարդում։ Այդ գործադուլներին մասնակցեցին 50 հազար մարդ՝ բոլշևիկները կարողացան նրանց պայքարին տալ քաղաքական բնույթ, որն արժանացավ «Պրավդա» թերթի գովասանքին։

Իմպերիալիստական պատերազմի տարիներին ծանր պայմաններ ստեղծվեցին Բաքվի բոլշևիկների համար։ Սակայն ինչպես միշտ, այս անգամ ևս բոլշևիկները դիմացան բոլոր դժվարություններին։ ՌՍԴԲՊ-ի անդամները, որոնց թվում նաև Մելիքյանը նավթագործարաններում, բանվորական կուցարաններում, պրոֆմիություններում, ակումբներում, ժողտներում և հասարակական վայրերում բանվորներին բացատրում էին իմպերիալիստական պատերազմի պատճառներն ու բնույթը և պայքարի էին կոչում ցարական ինքնակալության դեմ։

1915 թ. դեկտեմբերին Ստ. Շահումյանի, Ա. Միկոյանի, Մ. Մելիքյանի, Ա. Կարինյանի, Ա. Մռավյանի և ուրիշների նախաձեռնությամբ Թիֆլիսում լույս է տեսնում «Պայքար» սոցիալ-դեմոկրատական շաբաթաթերթը։ Թեև թերթի աշխատանքներին մասնակցում էին նաև մենշևիկները, բայց փաստորեն այն գտնվում էր բոլշևիկների ձեռքում։

Այդ օրերին ազգամիջյան տարաձայնությունները Անդրկովկասում հասել էին ծայր աստիճանի։ Մելիքյանը Կովկասի բոլշևիկների շարքերում «Պայքար» թերթում հանդես է գալիս մի շարք հոդվածներով, անդուլ պայքար մղում նացիոնալիզմի դեմ՝ հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի, հանուն բոլոր աշխատավորների համերաշխության։ Առանձնապես ուշադրավ են «Անհաշտ» ստորագրությամբ Մելիքյանի հոդվածները սպեցիֆիկ Դ. Անանունի, դաշնակցության «թեորետիկներ» Վարդանյանի և մյուսների դեմ։

Դ. Անանունը, Վարդանյանը և մյուսները հանդես գալով «Հորիզոն» և այլ թերթերում, իրենց համարում էին ժողովրդի «մտքի» և «հոգու տերերը», նրանց «կրթողներն» ու «դաստիարակները», առաջ քաշում, այսպես կոչված «ազգային կուլտուրական ավտոնոմիա»։ Անդրադառնալով այդ հոդվածներին, Մելիքյանը ցույց է տալիս, թե ինչպես նրանք ցանկանում են Անդրկովկասի ժողովուրդների միջև սերմանել նացիոնալիզմ, խախտել աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը։

Մելիքյանը նշում է, որ նրանց հետաքրքրողը սեփական շահն է, մնացած ամեն ինչը պտտվում է դրա շուրջը, իսկ շահամոլությունն իրականում ոչ ազգ է ճանաչում, ոչ լեզու։ Նա զորավոր արգումենտներով ապացուցում է, որ նացիոնալիստները ցարիզմի սպասավորներն են, ձգտում են կանգնեցնել ժողովրդի առաջընթացը ազատագրական պայքարի ճանապարհին։

Խոսելով դաշնակցական «Արև» թերթի մասին, որն հարձակումներ էր գործում վրաց և ադրբեջանական եղբայրական ժողովուրդների վրա, Մելիքյանը ցույց է տալիս, թե ինչպես «Արև»-ի աշխատակիցներն ու բարեկամները, որոնք իրենց համարում էին «հայ մտքի ղեկավարներ» դարձան այդ սոսկալի ջարդի մասնակիցներ։

Անցնելով «Պայքար» թերթի անելիքների և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների պարզաբանմանը, Մելիքյանը նշում է, որ «Պայքար»-ի պարտականությունն է աշխատավորությանը «պարզելու, հասկացնելու ում հարկն է, որ

նրանք չտարվեն ազգային տիրացուների մտքերով»։ Նա ընդգծում է, որ բոլշևիկներին կհաջողվի ջախջախել նացիոնալիզմը որպես բուրժուազիայի իդեոլոգիա, բոլոր բանվորներին համախմբելով ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը։

1917 թ. հունվարին՝ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Բաքվում սկսվում են մասսայական գործադուլներ։ Մարտին աքսորավայրից Բաքու է վերադառնում Ստ. Շահումյանը։ Բաքվի բոլշևիկները զինված Վ. Ի. Լենինի ապրիլյան նշանավոր թեզիսներով, ջախջախիչ հարվածներ են հասցնում կոնտրռևոլյուցիոն ժամանակավոր կառավարությանը և նրա գործակալներին՝ ազգայնական պարտիաներին։ Այդ օրերին ՌՍԴԲՊ-ի Բաքվի կոմիտեի օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթում Մելիքյանը հանդես է գալիս մի շարք հոդվածներով, որոնց մեջ դրվում է Բաքվի բանվոր դասակարգի անցած պայքարի ուղին, վերլուծվում են քաղաքական իրադրությունները։ Այդ հոդվածներից մեկում, դիմելով բանվորներին, Մելիքյանն ասում է. «Ձեր տեղը բանվորական կազմակերպությունն է, նրա առաջավոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը... պետք է ձգտել հարազատ կուսակցության շարքերը մտնելու»։ «Մոտ է այն ժամը,— գրում է նա, — որ բանվորությունը վերջնականապես պետք է ազատվի դասակարգային կաշկանդիչ կապանքներից»։

Մելիքյանը մի շարք հոդվածներ է տպագրում նաև ՌՍԴԲՊ(բ) Բաքվի կոմիտեի օրգան «Բանվորի խոսք» շաբաթաթերթում, որը լույս տեսավ 1918 թ. հունվար, փետրվար, մարտ ամիսներին։ Այդ հոդվածներում հետևողականորեն պարզաբանվում է այն գաղափարը, որ «հայ ժողովուրդը գերի չպետք է մնա ազգայնական փրկիչների ձեռքին», հայ աշխատավորությանը կոչ է անում ամեն կերպ պայքարել դաշնակցականների, մենշևիկների, մուսավաթների և էսեռների դեմ, ցարական ինքնակալության դեմ։ Պետք է բոլոր միջոցներով օգնել «դասակարգերն իրարից բաժանող անջրպետը խորացնելու և դասակարգային կռվի սկզբունքները բացատրելու» գործին — եզրակացնում է նա։

Բացատրելով բոլշևիկյան պարտիայի դերն ու խնդիրները, Մելիքյանը գրում է, որ «արևի լույսի նման» արդեն պարզ է դարձել, որ այդ պարտիան կոչված է բանվորներին և գյուղացիներին ինքնակալությունից ազատելու պատմական մեծ միսիայի համար։

Անդրադառնալով գյուղացիության հարցին, Մելիքյանը ընդգծում է. «...Կեղեքվող գյուղացիությունն իր փրկությունը պետք է ստանա ոչ թե մի կտոր հող ձեռք բերելով, այլ այն ժամանակ, երբ արդյունաբերության ողջ միջոցները (դրա հետ էլ հողը) կդառնա ընդհանուր սեփականություն, իսկ այդ կլինի, երբ դասակարգային պայքարի մեջ հաղթող հանդիսանա գործարանական բանվորությունը և չունևոր, կեղեքվող գյուղացիությունը»։

ՌՍԴԲՊ 6-րդ համագումարի ժամանակավոր կառավարությունը տապալելու, պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու դիրեկտիվների համաձայն 1917 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին Բաքվում ծավալվում են բանվորական գործադուլներ, որոնց մասնակցում է Բաքվի ողջ պրոլետարիատը։ Այս պայքարի հետևանքով ցրվում է էսեռ-մենշևիկյան կառավարությունը, իշխանությունն անցնում է պրոլետարիատի ձեռքը, ստեղծվում է ժամանակավոր գործադիր կոմիտե՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի օրերին Բաքվի բոլշևիկները ոգեշնչված Պետրոգրադի պրոլետարիատի հաղթանակով՝ հոկտեմբերի 31-ին հռչակում են ամբողջ իշխանությունը բանվորների և զինվորների

դեպուտատների Սովետին լոզունգը։ Այդ օրերին Մ. Մելիքյանը Բաքվի բոլշևիկների շարքերում հայ, ռուս, ադրբեջանցի աշխատավորների մեջ պրոպագանդիստական աշխատանք էր ծավալում ընդդեմ բուրժուա-նացիոնալիստների, ընդդեմ ընդհանուր թշնամու՝ հանուն Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրության։ Նա իր ելույթներում պարզաբանում էր դեպքերի իսկական խմաստը, մահացու հարվածներ հասցնում բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին։

Սակայն, ստեղծված իրադարձությունների պայմաններում գնալով դժվարանում էր Բաքվի բոլշևիկների աշխատանքը։ Սկսվում է օտարերկրյա ինտերվենցիան, որին աջակցում են Կովկասի նացիոնալիստները։ 1918 թ. հուլիսի 31-ին Բաքվում ժամանակավորապես պարտվում է Սովետական իշխանությունը։

Կոմունայի անկումից հետո անգլիական զավթիչները, մուսավաթականները ու դաշնակները հաշվեհարդար են տեսնում ռևոլյուցիոն գործիչների՝ այդ թվում և աննկուն բոլշևիկ Մ. Մելիքյանի հետ։ 1918 թ. սեպտեմբերի 18-ին նրանք գազանաբար խոշտանգում են ականավոր բոլշևիկ Մ. Մելիքյանին, մի մարդու, որն իր ամբողջ գիտակցական կյանքը, եռանդն ու ընդունակությունները նվիրել էր աշխատավոր ժողովրդին, նրա ազատագրության և երջանկության գործին։